

Համար. ԵՂԻՑԻ ԱՆՈՒՆ ՏԵԱՌՆ ԵՆ ՕՐՀ-
ՆԵՑԻՑ ԶՏԷՐ. Իսկ քանի որ անորոշ են
խրատադիրները վերջապետութեան՝ դու-
ցէ նաեւ ի ՏԷՐ ՊԱՐԾԵՍՑԻՆ ալ միասին
կ'ըսեն՝ պաշտօնեաներուն հետ:

Ամփոփոյքէս կը տեսնուի, քիչ մ'աւելի
յայտնի կերպով, թէ որքան կշռադատ բա-
ժանում եղած էր ԺԳ. դարու պատարադի
արարողութեան աղօթքներու եւ շարժու-
ձեւերուն, սպասաւորներու եւ ժողովուրդ-
դին ունեցած մասերուն մէջ: Մանաւանդ
ժողովուրդին տրուած կարճ աղօթքները
չառ կը դիւրացնէին անոնց մասնակցու-
թիւնը Գերադոյն Զոհին խորհրդակա-
տարման. եւ միանգամայն աւելի ուշա-
դրութեամբ եւ եռանդեամբ կրնային հե-
տեւիլ պատարադի ընթացքին:

Աւստոս որ նոյն իսկ ձեռագիրներէն մի
քանի հատը, ժողովուրդին ինկած այն
պատասխաններէն շատերը դպիրներուն
սեւ կու տան, այնպէս որ Փառէն Սրբա-
ղանի հրատարակած ուսումնասիրութեան
մէջ պորձածուած Արճիշեցիի տպագրու-
թիւնը բոլորովին զուրկ է ժողովուրդի
մասերէն:

Ի՞նչ լաւ պիտի ըլլար եթէ ապագային
կարենայինք կրկին ժողովուրդին վերա-
դարձնել անոնց յարմար մասերը, որպէս
զի աւելի արդիւնաւոր կերպով կարենա-
յին հետեւիլ սուրբ պատարադի հոգեպա-
րար արարողութեան:

(Վերջ)

Հ. ՂՈՒԿԱՍ ՖՈԿՈԼԵԱՆ

ԳՈՎՔ ՄԱՆԿՈՒԹԵԱՆ

Կ'ուզե՞ս ըմպել
Առուակներէն, ծաղիկներէն,
Այգաբացի ցայթաղբիրէն
Գարունի խանդն ու խայտանք...
Օ՛ն, մօտեցո՛ւր բաժակի պէս,
Շրթունքներուդ ծաբան անձուն,
Որպէս աղբիւր ու վարդի բոյր,
Սա Մանուկի այտերուն:

Կ'ուզե՞ս տեսնել
Սա երկնքի նայուածքը ջինջ,
Ազամանդի շողիւմն ամբիծ,
Ցատակը լուրժ լինքերուն.
Օ՛ն, սեւեռէ՛ նետն աչքերուդ,
Կարօտանքի նրման քրքուն,
Երազի պէս լուռ, հոգեգրաւ,
Սա Մանուկի աչքերուն:

Կ'ուզե՞ս վառել
Ամմեղութեան բոցով պայծառ
Ու հրմուսնքի շողերով վառ
Ջահը շէնշող քու տունիդ...
Օ՛ն, պինդ գրկէ՛ կուրծքիդ վըրայ,
Որպէս Սիրոյ Արեւ փառփուն,
Որպէս երկինք աստեղավառ,
Սա Մանուկի Սիրուն անհուն:

Հ. ԵՓՐԵՄ ՏԷՐ-ՂԱԶԱՐԵԱՆ

ՇՈՒՇԱՆ ՎԱՐԳԵՆԻ

ԹԱՏՐԵՐԳՈՒԹԻՒՆ ԵՐԵՔ ԱՐԱՐՈՎ

(Թուական 460-473, Դեկտեմբեր 14)

Գրեց Հ. ՎԱՀԱՆ ՅՈՎՀԱՆԵՍԵԱՆ

(Շար. տե'ս «Բազմավէպ» 1963, ք. 4-8, էջ 137)

ԵՐԿՐՈՐԴ ԱՐԱՐ

ԳՈՐԾՈՂ ԱՆՁԵՐ ԵՐԿՐՈՐԴ ԱՐԱՐԻ

Շուշանիկ - Դուստր վարդան Մամիկո-
նեանի եւ կին Վաղգէնի
Վաղգէն - Բդեշխ Գուգարքի
Սողոմէ - Նաժիշտ եւ մտերիմ Շուշանիկի
Ջուլիկ - Եղբայր Վաղգէնի, հիւանդոտ եւ
տկարակալ
Օհան - Եպիսկոպոս Յուրտաւ քաղաքի
Վաչէ - Որդի Շուշանիկի (չառ փոքր)
Ջարուհի - Դասընկեր Շուշանիկի
Սիրուշ - Դասընկեր Շուշանիկի
Պողոտան - Դահապետ Վաղգէնի
Երկու քրմուհիներ
Երկու մանկալարիկներ

Տեսարանը կը ներկայացնէ շփեղ պալա-
տի մը դահլիճը. բազմոցներ, քիկնաքոռ-
ներ, գորգ եւ սեղան մը: Անկիւնները
շահեր: Պատէն կախուած են գէմքեր եւ
անասունի կմախքներ: Մէկ անկիւնը՝ Տի-
րամօր պատկեր մը: Երկու մանկալարիկ-
ներ կանգնած են մէկ մէկ անկիւն:

ՏԵՍԻԼ ԱՌԱՋԻՆ

Շուշանիկ առանձին

Շուշանիկ - (Միմակը, գետնի վրայ
ձնբաղիր, ձեռնամաձ, Տիրամօր պատկե-
րին առջեւ բարձրաձայն հեկեկալով կ'ա-

ղօթէ) Ո՛վ Մայր սիրելի, քու խաչուած
Որդիկդ սիրոյն Համար՝ ընդունէ՛ իմ ար-
տասուալից աղօթքս. փրկէ՛ իմ զաւակ-
ներս ուրացութեան սեւ անունէն: Ա՛ն ա-
նոնց հոգիները, ես կ'արեմ փոքրիկ պա-
տանքները, քան զեւերուն զոհուին:

Քիչ ատենէն Վաղգէն կը հասնի՝ Յուգա-
յի պէս համբուրելով զիս մատներու: Լոկ
դուն կը հասնինս մօր մը վիշտերը: Այն-
պէս կ'արտասուեմ, ինչպէս Խաչին տակ
դուն լացիր: Օղնէ՛ ինծի, օղնէ՛ ինծի...:

ՏԵՍԻԼ ԵՐԿՐՈՐԴ

Սողոմէ եւ Շուշանիկ

Սողոմէ - (Ներս՝ գալով) Ամբողջ դիշերն
արցունքով անցուցիր. ելի՛ր, պատառ մը
հաց կեր եւ դորացիր:

Շուշանիկ - Ա՛հ, Սողոմէ՛, Սողոմէ՛. ես
իմ զաւակներս կ'ուզեմ, զաւակներս (չատ
ցաւագին. ապա ոտքի ելլելով կը կանգնի
եւ ուժգին շեշտ անում) Վաղգէն, զաւակ-
ներս քեզմէ կ'ուզեմ: Դուն չես ճանչնար
վարդանի աղջիկը: Կը մեռնի, բայց չի
ձուր:

Սողոմէ - Տիրուհիս յուսահատելու չէ.
ես յատահ եմ որ իշխանները պիտի դի-
մադրեն իրենց հօրը. քեզ աւելի կը սի-
րեն՝ քան թէ զինքը:

Շուշանիկ - Շա՛տ փոքր են, Սողոմէ՛.

աղայ են, կը խաբուին: յետոյ կը դողան իրենց հօր առջև: Քանի՞ անգամ զիրենք պատերուն դարկած է: Երբ կառուի՞ վազըն աւելի սոսկալի կը դառնայ:

Սողոմէ - Ես բան մը կը խորհիմ: Կարելի չէ՞ չորս փոքրերն ալ Հայաստան փախցնել, օրինակի համար՝ Տայքի լեռները:

Շուշանիկ - Շա՛տ ուշ է, արդէն ձեռքէս յափշտակած՝ Ուփրեթի բերդը տարեր են, եւ վաղը կամ միւս օր՝ Վաղգէն կը հասնի: Սրտիս մէջ յոյսի կայծ մը կայ: Թերեւս Վաղգէն հրաժարի իր չար զիտաւորութենէն, յիշէ իր պատուական հայրը՝ Աշուղան: Բայց տկար յոյս մըն է միայն:

Սողոմէ - Ասոնք սեւ ամպեր են, Տիրուհի, կու դան ու կ'անցնին: յետոյ զեղեցիկ արեգակը կը ծագի:

Շուշանիկ - Գուզարքի լեռներուն վրայ այլեւս քրիստոնեայ արեւ չի ծագիր:

Սողոմէ - Վստահ եմ որ յաղթանակը քուկդ է եւ զեղեցիկ պսակը քեզի համար պատրաստուած է:

Շուշանիկ - Ի՞նչ պտակ, Սողոմէ: Իմ պտակս՝ իմ դաւակներս են, եւ անոնք ալ յափշտակուած են: Աւելի կ'ընտրէի աղքատ հովիւի մը հարսն ըլլալ, քան այս արքունիքը: Ղէթ կարենայի կուրծքիս սեղմել իմ դաւակներս եւ ըսել՝ թէ յաւիտեան իմս են, իմ հողիէս մաս մը, իմ սիրտս եւ արեւնս: Իսկ ես հիմա իմ դաւակներուն մասը կը փափաքիմ: Ի՞նչ ահաւոր բան է: մայր մը իր դաւակներուն մասը փափաքի...: Արդեօք անգուժիմ եմ, պաղա՞ն եմ, սիրտ չունի՞մ: (Դուրսէն պղինձէ կոչնակի ձայներ կու գան: Քիչ մը դադար: ապա) Հնչեցէ՛ք, հնչեցէ՛ք, ո՞վ քաղցր կոչնակներ, թերեւս վերջին անգամ ըլլայ որ ձեր արձագանդները բարձրանան Գուզարքի լեռներուն վրայ:

ՏԵՍԻԼ ԵՐՐՐՈՐԴ

Մանկկալիկ մը եւ վերինները

Մանկկալիկ - (Խոնարհելով Շուշանիկի առջեւ) Երեկոյեան ժամերգութիւնն սկը-

սաւ: արդեօք կը փափաքի՞ մեր տիրուհին ներկայ գտնուիլ:

Շուշանիկ - Այո՛: Սողոմէ՛, երթանք: Ինձ համար վերջին անգամ պիտի ըլլայ Աստուծոյ տաճարն այցելել:

Սողոմէ - Ինչո՞ւ աղջկէս կ'ըսէք, Տիրուհի: Եթէ մեր ժամերը կործանեն՝ մեր մարմինները տաճար կ'ընենք, եւ մեր սրտերը՝ Աստուծոյ խորան:

Շուշանիկ - Ապրի՛ս, Սողոմէ, ճիշտ ա՛յլ պէտք է: Թող զիտան Վաղգէնն ու Պարսիկները՝ թէ մեր հաւատքը սրբիլու է ժայռ մ'է եւ չեն կրնար զայն խորտակել:

Սողոմէ - (Մեկուսի) Ճիշտ իր հայրն է: հարազատ արեւը չի դաւաճաներ:

Շուշանիկ - Երթա՛նք, Սողոմէ, ինձ համար այս ժամերգութիւնը Զիթենայ լեռը պիտի ըլլայ եւ ապա Գուզարթա պիտի բարձրանամ:

Սողոմէ - Եւ ապա յարութիւն եւ փառք (կը մեկնին):

ՏԵՍԻԼ ԶՈՐՐՈՐԴ

Մանկկալիկ եւ ապա Զոքիկ ու Վաչէ

Ա. Մանկկալիկ - Ո՛հ, քիչ մը բերաննիս բանանք: արձան ըլլալէ ձանձրացայ:

Բ. Մանկկալիկ - Ամէն բան պիտի տեսնենք, լսենք, եւ յետոյ համբ, խուլ եւ կոյր պիտի ձեւանանք:

Ա. Մանկկալիկ - Հէրն անիծեմ պալատին ալ, հարստութեան ալ եւ այս զըլխարկին ալ (Գլխարկը գետին կը գարնէ):

Բ. Մանկկալիկ - Եկո՛ւր քիչ մը պարենք, ոտքերնիս չարժենք: մենք մեղի ենք (քեւ քեւի տուած՝ սուլելով կը պարեն):

Ա. Մանկկալիկ - Չեղաւ, չեղաւ (քեւը ետ քաշելով) մեր սիրելի տիկինը սուղի մէջ է եւ մենք կը պարենք: ո՛չ, ո՛չ, չեղաւ: մեծ ապերախութիւն է: Մեզի համար ճշմարիտ մայր է: անանկ չէ՞: Ինձի նոյնիսկ խոստացաւ, երբ մեծնամ, այդի մը նուիրել եւ զեղեցիկ աղջիկ մը հարս տալ:

Բ. Մանկկալիկ - Ինձ ալ խոստացաւ զալ տարի Տաղստան՝ իմ հայրենիքս զրբկել, առատ ոսկիներ տալով: մայրիկիս շատ կարօտեց եմ:

Ա. Մանկկալիկ - Որքան իր սիրտը բարե է՝ թող այնքան Աստուած փոխարէն տայ:

Բ. Մանկկալիկ - Մակայն...

Ա. Մանկկալիկ - Մակայն ի՞նչ: Ի՞նչ ըսել կ'ուզես:

Բ. Մանկկալիկ - Չլսեցի՞ր իր ողբերը: Այս պալատին մէջ խոչոր փոթորիկ մը կը պատրաստուի, եւ վախեմ մեր յոյսերն ալ օղը ցնդին:

Ա. Մանկկալիկ - Վաղգէն իշխանն իր տիկինը կը սիրէ:

Բ. Մանկկալիկ - Խեղդ աղչափ կը հասնի: Վաղգէն փա՛ռք կը սիրէ: Չե՞ս յիշեր թէ միշտ Հայաստանի եւ Վրաստանի թաղաւոր ըլլալու վրայ կը խօսէր: Իր յոյսը Յաղկերտին վրայ դրած է: եւ այդ կոյրն ալ, առատ խոստումներով, նախ քրիստոնէութիւնը ուրանալ կու տայ, յետոյ կա՛մ պատերազմի կը տանի՝ առաջին զիծերուն վրայ մեղցնելու, կամ կը թունաւորէ եւ կը սպաննէ:

Ա. Մանկկալիկ - Մեր իշխանը խելացի եւ քաջ է, եթէ զինքը խաբեն, Գուզարքի մէջ մէկ հատ պարսիկ չի ձգեր:

Բ. Մանկկալիկ - Վստակ Սիւնեցին ալ աղ յոյսերն ունէր, բայց բանտին մէջ "րզնտամ" մեռաւ:

Զոքիկ - (Բեմ կու գայ, սեւ վերաքլուին մէջ պլլած փոքրիկ Վաչէն, բոլորովին ծածկած: Մանկկալիկները իսկոյն ոտքի կը կանգնին) Ո՞ւր է իշխանուհի Շուշան Վաղգէնին:

Ա. Մանկկալիկ - Եկեղեցի դնաց, տէր իմ:

Զոքիկ - Այդ կինն ալ եկեղեցիէն դուրս չ'ելլեր, կարծես արեգայ է: Իր գլխուն ի՞նչ փոթորիկ կը պատրաստուի՞ զեռ լուր չունի: (Մանկկալիկներուն) Գացէ՛ք, կանչեցէ՛ք զինքը: (Դուրսէն երգով «Ամէն» կը լսուի): Ահա ժամերգութիւնն արդէն վերջացաւ: (Մանկկալիկները կ'երքան)

Վաչէ - Հօրա՛ր, ո՞ւր է մաման, մամա՛ս կ'ուզեմ:

Զոքիկ - Հիմա, դաւա՛կս, հիմա կու գայ:

Վաչէ - Հօրա՛ր, ինչո՞ւ քոյրիկս ու եղբայրներս ալ չբերիր:

Զոքիկ - Անոնք ալ շուտով կու գան, Վաչէս: (Մեկուսի) Խեղճ հրեշտակներ, ո՛րքան սուտերով խաբուած են:

Վաչէ - Հօրա՛ր, զիտե՞ս, երբ զիտ այն զէջ տեղէն բերիր, քոյրիկս շատ լացաւ: Զոքիկ - Խեղճ անմեղներ, զեռ շատ պիտի լաք:

ՏԵՍԻԼ ՀԻՆԳԵՐՈՐԴ

Շուշանիկ, Սողոմէ եւ վերինները

Շուշանիկ - (Բեմ կը մտնէ ախուր, բայց վսեմ) Ո՛հ, սիրելի տաղրս, դուն հո՞ս: Ի՞նչ լուր Վաղգէնէն:

Զոքիկ - Դեռ ոչ մէկ սրտ լուր կայ, բոլորը կասկածներ են: Մակայն քեզի աւելի թանկագին բան մը բերեր եմ (Վաչէ ծածկուած է, Զոքիկին ետեւը):

Շուշանիկ - Իմ դաւակներէս աւելի թանկագին բան չկայ, Զոքիկ: մանաւանդ Վաչէիս կարօտը զիտ զերեզման պիտի տանի (Վաչէ դուրս կը քոչի եւ մօրը վիզը կ'իյնայ):

Զոքիկ - Սէրը չհամբերեց արդէն:

Վաչէ - Մայրի՛կ...:

Շուշանիկ - Վաչէ, հոգի՛ս... սիրտս... (Հեծեծագին համբուրելով եւ կուրծքին սեղմելով) ո՞ւր են եղբայրներդ ու քոյրիկդ Մարիամը:

Վաչէ - Այն բարձր լեռան բերդին մէջն են: Գիտե՞ս, մայրիկ, Մարիամը շատ լացաւ: քու քովդ կ'ուզէ գալ: Մամա՛, երթանք քոյրիկս եւ եղբայրներս ալ առնենք եւ միասին ըլլանք:

Շուշանիկ - Ո՛չ հոս, ո՛չ հոս, երկինքին մէջ:

Զոքիկ - Շուշանիկ՛ի, քու ցաւերդ զիտ կ'ոչնչացնեն: Ես պէտք էի սուր առնել եւ քու անմեղութիւնդ պաշտպանել: Բայց, ի՞նչ ընեմ, Վաղգէն իմ մեծ եղբայրս է,

հայրս ամէն իշխանութիւն իրեն տուաւ։
 Շուշանիկ – Կը կարծես թէ ես վաղղէնէն կը վախնամ։ Ձոջիկ, դուն երկտասարդ ես, չես ամուսնացած, որով չես դիտեր կիներուն ոյժը, մանաւանդ երբ մայր են։ Մի՛ մոռնար, Շուշանիկ՝ վարդանի աղջիկն է։

Ձոջիկ – (Ինքնիրեն) Քիչ կը մնայ որ ես կնիկի զգեստ հագուեմ եւ ինքը մանչու զընես։ (Ապա Շուշանիկին) Շուշանիկ, ես ամէն ջանք պիտի թափեմ քեզ այս կրակէն ազատելու համար։

Շուշանիկ – Ամէն բան վերինին կամքէն կախում ունի։

Ձոջիկ – Ներքէ ինձ, Շուշանիկ. պէտք է չուտով Յուրտաւ քաղաքն իջնեմ, խոսքով թեան չընկներ կան. ապստամբութեան ծրարները։ Դժուր են վաղղէնէն։ Ձարդի եւ արեւնահեղութեան վտանգ մը կը սպառնայ։

Շուշանիկ – Վաղղէնէն բարի լուր մը բեր, Ձոջիկ։

Ձոջիկ – Ես ալ անհամբեր այդ լուրին կը սպասեմ։ Վաղղէնին ներկայութիւնն անհրաժեշտ է։ (Ձոջիկ կը մեկնի)։

Շուշանիկ – Քրիստոնեայ ներկայութիւնը, ո՛չ թէ կրակապաշտ։ Ձոջիկ բարի երկտասարդ մըն է, բայց աղջկայ պէս փափուկ եւ թոյլ։ Մեղադրելու չէ, շատ հիւանդութիւններ քաշած է եւ վաղղէն դիտուն շատ դարկած է։

Վաչէ – Մամա՛, ես այն հայրիկը չեմ ուզեր, ինձի բարի հայրիկ մը բեր. մեկ միշտ կը ծեծէ։

Շուշանիկ – Բարի հայրիկդ Աստուած է, դաւակա. երբ իրեն քով երթանք, դուն միշտ ուրախ պիտի ըլլաս։

Սողոմէ – Տիրուհիս, մի՛ կոտրէք մեր սրտերը, մի՛ լացնէք խեղճ փոքրիկը, ահա քեզի Աստուած արգէն մէկ շնորհք մը բրաւ. անպատճառ միւսներն ալ կը զըրկես։

Շուշանիկ – Աստուած ձայնդ լսէ։ Սողոմէ, վաչէն անշուշտ անօթի է, տար համով կարկանդակ մը տուր։ Գնա՛, վաչէս, Սողոմէն քեզի անուշեղէն պիտի տայ (վաչէ եւ Սողոմէ կը մեկնին)։ Դուք ալ

դադէք, վարը բակին մէջ խաղաղէք, հանդիստ ըրէք (Մանկկալիկներն ալ կ'երթան)։ Շուշանիկ միմալը)։ Ամիսներ անցան եւ վաչանէն լուր մը չեկաւ։ Լեռնէ լեռ ինք կած է Պարսիկներն հալածելու եւ Հայաստանն ազատելու համար։ Եթէ դիտար իմ վիճակս՝ Գուգարքը կրակի կոտոր... Բայց ես որը լըռուած եմ, դէ՞ մայրս չլսէ իմ ցաւերս, դէ՞ մայրս չլսէ...։

ՏԵՍԻՆՎԱՅԵՐՈՐԴ

Ա. Մանկկալիկ, Ջարուհի, Սիրուշ եւ Շուշանիկ

Ա. Մանկկալիկ – (Բեմ գալով) Աղնուաշուք իշխանուհի, լուր բերին թէ երկու աղնուաղան տիկիններ քեզ կ'ուզեն տեսնել։

Շուշանիկ – Անշուշտ իշխանուհի Որ' բերանը պիտի ըլլայ։

Ա. Մանկկալիկ – Ո՛չ, տիրուհի, ըսին թէ հեռուոր Հայաստանէն կու գան։

Շուշանիկ – Հայաստանէ՞ն. անմիջապէս ներս հրամցուցէք։ (Ինքնիրեն) Հայաստան, Հայաստան, ի՞նչ կարօտալի երկիր, ո՞րքան սրտիս մօտ աշխարհ։

Ջարուհի – (Սիրուշին հետ դրան մօտ կանգնած) Շուշանիկն է...։

Սիրուշ – Չեմ հաւատար աչքերուն։

Ջարուհի – Ո՞րքան փոխուած է։ Անձանաչելի դարձեր է։

Սիրուշ – Երբ վարժարան եկաւ՝ դարձանային անթառամ վարդ էր, իսկ հիմա...։

Ջարուհի – Մեղրամոմէ արձան մը...։

Շուշանիկ – Կը ճանչնամ թէ չեմ ճանչնար։ Խնդրեմ մօտ հրամեցէք։ (Երկուքն ալ կը մօտենան)։ Շուշանիկ երկար օտար լիով) Արդեօք Ջարուհի չե՞ս. իսկ դուն Սիրուշին խոշոր աչքերն ունիս։ Ի՞նչ երջանիկ բախտ է (կը համբուրուին)։

Սիրուշ – Մենք ենք փոխուած, սիրելի Շուշանիկ. տասնըհինգ տարի անցաւ այն օրէն որ Բակուրի աճապարը լրակարգ քեզ

փախցուց։ Տասնըհինգ տարին կնոջ մը դարունէն աշուն անցնիլ է։

Շուշանիկ – Ես արդէն խոր ձմրան մէջ մտայ. յիշողութիւնս տկար, սիրտս տըկար, աչքերս տկար, կեանքս ամենադառն։ Աւելի կ'ընտրէի հովիւի կին ըլլալ, ինչպէս Ջարուհի կատակով կ'ըսէր, քան թէ այս պալատը։ Սիրտս երբեք չըկապուեցաւ Գուգարքին եւ ուրացող վաղղէնին։

Սիրուշ – Վաղղէն իշխանին։

Շուշանիկ – Այո՛, վաղղէն ամենազօր իշխանին։ Ամէն օր նոր ողբերգութիւն մը կայ այս տանը մէջ։ Սուր չմնաց որ սիրտս չխոցէր։ Հազար անգամ երանի՛ թէ մեռնէի Գեղարքունիքին մէջ, երբ վաչան եկաւ եւ դիւ կրկին անդամ յափշտակեց Բակուրի ճիրաններէն։ Եւ դիւ վաղղէնին տուին, որովհետեւ իր հայրը՝ Աշուշտ մտերիմ բարեկամ էր իմ հօրս։ Փոխենք խօսակցութիւնը. տխուր բաներու վրայ չխօսինք։ Իմ հեռանալէս վերջ ի՞նչ եղաւ զպրոցը։

Ջարուհի – Սարսափ տիրեց բոլորիս վըրայ։ Մեծաւոր Մայրը մէկ ամիս մահացաւ հիւանդացու, իսկ Քոյր Հովիւր, կը յիշե՞ս... ցաւէն քար կտրեցաւ։ Իրաւունք ունէին ամէն խտուրթիւն ընելու։ Մենք զուրսը կանաչ դարուն կը տեսնէինք, բայց չէինք դիտեր թէ օձը կանաչին տակ կը ծածկէ իր զլուխը։

Շուշանիկ – Անշուշտ երկուքդ ալ աճուսնացած էք։

Սիրուշ – Այո՛, ես Արծրունիներուն հարս դացի, Ջարուհին Խորխոռունիներուն զնայ։

Շուշանիկ – Ջաւահիր։

Ջարուհի – Սիրուշն երկու մանչ եւ մէկ աղջիկ ունի, ես՝ երկու աղջիկ եւ մէկ մանչ։

Շուշանիկ – Օր մը իրարու հետ կը կարգէք։

Սիրուշ – Եւ դուն հարսնիքներուն պիտի դաս։

Շուշանիկ – Եթէ ողջ մնամ։

Ջարուհի – Շուշանիկ, դուն քաջ աղ-

ջիկ էիր, ինչո՞ւ հիմա այնքան յոռետես դարձեր ես։

Շուշանիկ – Իմ ճակատագիրս սեւ մուրով զրուած է։ Տկար եմ, ոյժ չունիմ պայքարելու։

Սիրուշ – Այդպէս մի՛ ըսեր. ամէնուս ապագան Աստուծոյ ձեռքն է։ Լսեցինք որ չորս հրեշտակներ ունիս։

Շուշանիկ – Այո՛, չորս հրեշտակներ, յափշտակուած իրենց մօր զրկէն։ Երանի՛ թէ վայրի թղենիի պէս ամուլ ըլլայի։

Ջարուհի – Մահը միայն կրնայ բաժնել մայր մը իր զաւակներէն։

Շուշանիկ – Մահուան բաժանում չէ, սիրելի Ջարուհի, մահուան բաժանում չէ, աւելի ահաւոր բան մը։ Ես հազար անգամ երջանիկ պիտի ըլլայի՛ եթէ չորս զաւակներուս հետ միասին մէկ գերեզման մտնէինք, քան թէ դեւերուն նուիրուէին։

Սիրուշ – Ի՞նչ խօսքեր են, չենք հասկընար։

Սիրուշ – Ջաւահիրդ քուկդ չե՞ն, մըկըրտուած չե՞ն, դուն չե՞ս իրենց մայրը եւ ի՞նչ բարեպաշտ մայր։

Շուշանիկ – Մա՛յր. մայր անոնք են որ կրնան զրկել իրենց զաւակները ու կը տեսնեն անոնց չուշանի պէս աճիլը. կը փայտայեն, կ'ուրախանան անոնց թոթովանքներով։ Անոնց փոքրիկ սրտին մէջ կը դնեն Քրիստոսի սէրը. աչքերը կ'օժեն ճշմարտութեան լոյսով։ Իսկ իմ չորս հրեշտակներս վաղը կամ միւս օր դեւերուն պիտի նուիրուին։ Ա՛խ, Ջարուհի, վարդանի թոռները ուրացողներ պիտի ըլլան։

Սիրուշ – Ի՞նչ ուրացութիւն է, չենք հասկնար։

Շուշանիկ – Չեմ ուզեր ցաւը ցաւին վըրայ բերել։

ՏԵՍԻՆՎԱՅԵՐՈՐԴ

Վաչէ եւ վերինները

Վաչէ – (Ձեռքին մէջ գնդակ մը, ներս կը վազէ) Մայրիկ, միշտ միասին պիտի ըլլանք, այնպէս չէ՞։

Շուշանիկ - Այո՛, դաւա՛կա... Երկինքի մէջ, բայց հոս... Թերեւս... չուտով...
Զարուհի - (Գրկելով վաչէն) Անունդ բո՛ւն է:

Վաչէ - Ի՞մ անունս, վաչէ է:

Սիրուշ - Շուշանիկ, կ'ըսէիր թէ դաւակներդ յախշտակեր են:

Շուշանիկ - Իմս է քանի մը վայրկեանի համար: Աս ալ յախշտակեր էին, բայց Աստուած չնորհեց անդամ մը, զէթ վերջին համբոյրը տալու:

Զարուհի - Շուշանիկ, բանակներ կ'ուզես, քեզի հաղարներով բերենք. ես Խորխուռնիներէն, Սիրուշը Արծրունիներէն կրնանք քաւական ոյժեր հասցնել: Սիրուշէ; (դառնալով ընկերուհիին) ալ չեթանք Աղուանից թաղաւորին հարսանիքին, ուղղակի ետ դառնանք Հայաստան եւ խեղճ Շուշանիկն ազատենք:

Շուշանիկ - Ո՛ւշ, դոցէք Աղուանիստան, ժամանակն ուշ է. վաղէն վաղը կամ միւս օր կը հասնի: Լուրերը շատ ցաւալի են, կ'ըսեն թէ ուրացած է քրիստոնէութիւնը եւ պարսիկ կին մ'առած կու գայ: Խոստացեր է արքային՝ Գուգարքը կրակապաշտ դարձնել, կործանել եկեղեցիները եւ ատուշաններ կանգնել: Զաւակներս պիտի կրակէն պիտի անցնէ, եւ շանթերն իմ վրաս պիտի թափէ: Ես պատրաստ եմ մեռնելու:

Զարուհի - Անդգամ վաղցէն:

Սիրուշ - Պատուական հօր մը անարժանի որդի:

Շուշանիկ - Երբ կեսրայրս մեռաւ, ինքզինքն ազատ դրաց. իր բոլոր յուրի կիրքերն իժերու պէս գլուխին ցցեցին: Կեանքս Հայաստանի եւ վրաստանի միահեծան թաղաւոր ըլլալ. փառամոլ է, բիրտ եւ եսասէր: Յուդայի պէս վաճառեց իր հաւատքը, երկիրը եւ ժողովուրդը. բայց չի կրնար Շուշան վարդենին վաճառել: Ես վարդան Մամիկոնեանին ազջիւն եմ, թող լաւ գիտնայ: Ո՛ւշ, սիրելի՛ Զարուհի, սիրելի՛ Սիրուշ, ես չեմ վախճար իր սուրէն:

Զարուհի - Վահանը լուր ունի՞:

Շուշանիկ - Չեմ ուզեր որ գիտնայ, կը ստեղծեմ եղբայրստան կոչուելով:

Սիրուշ - Հոս պատիւի խնդիր է. Հայաստանի եւ Մամիկոնեաններու պատիւին:

Զարուհի - Սիրուշ, անմիջապէս Տայք վաղենք, հոն Սասունցիներու վաշտեր կան. լուր տանք որ չուտով հասնին: Մենք վարդ մը մեծցնենք, եւ այդ անդամը ստեղծուի՞ր ընէ:

Շուշանիկ - Շատ ուշ է, եւ պարապ տեղ արիւն պիտի թափի:

Սիրուշ - Իսկ մայրդ գիտէ՞ քու վիճակդ:

Շուշանիկ - Լաւ է որ չգիտնայ, ինձ հետ գերեզման կ'իջնէ. արդէն տարիքս եւ հիւանդ է:

Զարուհի - (Սիրուշին) Սիրուշ, շուտ, Տայք մեկնիր. անմիջապէս պաշտպանել երբեք ուշ է:

Սիրուշ - Ես ալ այդպէս կը խորհիմ: Մեկնիրք Զարուհի:

Զարուհի - (Համբուրելով Շուշանիկը) Քաջութիւն, Շուշանիկ:

Սիրուշ - (Ինքն ալ համբուրելով) Քաջութիւն, Շուշանիկ:

Զարուհի - (Գրկելով փոքրիկ վաչէն) Մամայիդ քովէն բնաւ չբաժնուիս, հասկըցա՞ր մանչուկս:

Վաչէ - Միշտ մամայիս քով պիտի ըլլամ:

Շուշանիկ - Կեցէք վայրկեան մը. մենք խօսքերով բռնուեցանք, եւ օջառակ մը կամ պատառ մը անուշեղէն խի չտուիք: Գէթ միտսին ճաշ մ'ընէինք, վերջին ընթրիքը...:

Սիրուշ - Մենք սրտած էինք քանի մը օր քովդ մնալ, բայց այս տխուր կացութիւնը մեզ կը ստիպէ անմիջապէս Տայք մեկնել. չնորհալալ ենք, Շուշանիկ. լուրերու մէջ՝ անոյշ բաժակներ կը պարպենք:

Շուշանիկ - Եթէ Աստուած տայ: (Մինչ մեկնելու հետ եմ) Մէկ բան կը խնդրեմ. ո՛ւշ բանակ, ո՛չ Սասունցի. զէթ հօրս գերեզմանին վրայ իմ տեղս կաթիլ մը արցունք դրէք:

Սիրուշ եւ Զարուհի - Յետեւութիւն, Շուշանիկ, քաջութիւն քեզ... (կը մեկնին):

Շուշանիկ - (Միմալը) Տարէք համբուրներս սիրելի հայրենիքիս, հօրս սուրբ գերեզմանին, իմ պապիս օրհնեալ ոսկորներուն: Քիչ ատենէն ես ալ պիտի երթամ յաւիտեան իրենց միանալու: Երանի՛ թէ իրենց կողքին դամբարան մ'ունենայի, քան այս վայրի Գուգարքին մէջ:

ՏԵՍԻԼ ՈՒԹԵՐՈՐԴ

Օհան Եպիսկոպոս, Զոյիկ եւ վերինները

Ա. Մանկլարիկ - (Բեմ գալով) Տիրութիւն, Օհան եպիսկոպոսն ու իշխան Զոյիկ փութով կ'ուզեն Ձեզ տեսնել:

Շուշանիկ - Թող շուտով ներս գան: (Ինքն իրեն) Թերեւս բարի լուր մը կը բերեն: (Օհան եւ Զոյիկ ներս կը մտնեն, լուռ, տրտու կանգ կ'առնեն դրան մօտ: Շուշանիկ ընդառաջ վազելով) Ի՞նչ լուր. ո՞րք է մամուկս:

Օհան - (Տրտմաքին) Մարմինով այո՛, բայց հոգիով...:

Շուշանիկ - Ուրեմն, ճիշտ է թէ ուրացաւ Քրիստոս...:

Օհան - Այո՛, վաղէն այլեւս քրիստոնեայ չէ...:

Զոյիկ - Պարսիկ գուռներով երէկ Յուդա մայրաքաղաքն հասաւ եւ իր Տիկինը կ'ուզէ...:

Օհան - Ի՛ր Տիկինը, բայց ոչ քրիստոնեայ: Սպառնալիքով ստիպեց մեզ գալու եւ քեզ համոզելու...:

Շուշանիկ - Համոզելու որ հաւատքս ուրանամ. եւ դուն Օհան եպիսկոպոս, Աստուծոյ պաշտօնեան, յա՞նձն առիր այդ գիւղային առաքելութիւնը:

Զոյիկ - Շուշանիկ, դուն լաւ կը ճանչնաս եղբայրս. գիտես թէ ի՞նչ անդուծ, յամառ, փառամոլ է. եթէ կամքը չկաւարուի՝ ամէն բան կը քանդէ:

Օհան - Եկեղեցիներն հիմնադրուած կը կործանէ:

Շուշանիկ - Քարէ շինուած եկեղեցիներուն համար մեր հոգի՞ն կ'որսնցնենք:

Օհան - Թերեւս քու երեւոյթ, մէկ խօսքդ իր սիրտը կակղցնէ: Խոստացաւ խնայել եկեղեցիներուն՝ եթէ դուն յանձն առնես...:

Զոյիկ - Գէթ յերեսանց ուրացում մը: Ձեռք ըսիր միշտ կրակապաշտ մնալ, յետոյ կը դիմաս. Աստուած այսպիսի վայրկեանները կը հասկնայ, ողորմած է: Քու հայրդ ալ նոյն բանն ըրաւ, երբ ժամանակը պահանջեց:

Շուշանիկ - Ծիշտ է, սակայն ես գիտեմ իր ողորմութիւնը, իր հեծեծանքները, մինչեւ որ Աւարայրի մէջ քաւեց իր յանցանքը: Ամէնէն սոսկալի դահիճը՝ մարդուս յանցաւոր խիղճն է:

Օհան - Ո՞րք կը տեսնէ քու խիղճը. դուն եւ Աստուած:

Շուշանիկ - Օհան եպիսկոպոս, ես քու բերնէդ ուրիշ խօսքեր կ'ուզէի լսել. խօսքեր քաջ հովիւի՝ որ իր կեանքը կու տայ իր ոչխարներուն համար. եւ դուն ինձ թո՛յն կը հրամայես՝ հոգիս ապանելու համար:

Օհան - Մեր սրբավայրերուն, խաչերուն, կղերին սէրն է որ գիտ կը ստիպէ այսպէս դործել:

Շուշանիկ - Ուրեմն, դուն մահէն կը վախնաս. բարձր նպատակի մը համար հերոսաբար մեռնիլ չես գիտեր: Մե՛ղք եպիսկոպոսական պատիւիդ՝ որ տկար կին մը քեզ այս խրատները տայ:

Օհան - Միթէ աշխարհս կը փլչի եթէ խօսք մը, անցողակի հաւանութիւն մը տաս:

Շուշանիկ - Դուն կը հաւատաս Քրիստոսի, կը սիրես զինքը, կ'ընդունի՞ր իր ճշմարիտ Աստուծո՞ւ:

Օհան - Միթէ կը տարակուսի՞ր, իշխանութի:

Շուշանիկ - Երանի թէ չտարակուսէի: Զոյիկ - Սակայն խորհելու ես եկեղեցիներու քանդումը:

Օհան - Վանքերու աւերումը, կուստատաններուն պղծումը:

Զոյիկ - Այդ լիւր Պարսիկները կրնան

նոյնիսկ զերեզմանները բռնաբարել:

ՕՀան - Սուրբերու մասունքները ոտնա-
կոխ ընել:

Ջոջիկ - Խորհէ զու զաւակներդ. զա-
նոնք կրակէն պիտի անցընէ. անմեղ Վա-
չէն, Մարիամը, Համադասպը, Մուշեղը
պիտի յափշտակէ քեզմէ:

Շուշանիկ - Թող ամէն բան առնէ, բայց
ո՛չ իմ հոգին:

Ջոջիկ - Ես քեզ անձնազուհե եւ որդեսէր
մայր կը կարծէի. դուն անդո՛ւթ ես. դա-
զա՛ն ես, դուք չունիս մեր վրայ:

Օհան - Դուն այս երկրին մէջ իբր օ-
տարական մը ապրած ես:

Ջոջիկ - Անօղուտ հերոս մը:

Օհան - Խելադար կին մը: Երթանք,
Ջոջիկ, թող իր արիւնն իր գլխուն վրայ
թափի:

Շուշանիկ - Օհան եպիսկոպոս եւ իշ-
խան Ջոջիկ. դուք կը սարսափիք բիրտ
ոյժէն. մոռցած էք որ երկինքին մէջ մէ-
կը կայ՝ որ բռնաւորին բռնեցըլ օդին
մէջ կը կարկամեցնէ, որ հատու սուրը
մոմի պէս կը հալեցնէ (Դուրսէն փողի
ձայներ, խառն աղմուկներ):

Ջոջիկ - Ահա՛ կը հասնի Վազգէն. Շու-
շանի՛կ, վերջին խօսք մը:

Օհան - Քու ձեռքդ է մեր փրկութիւնը:
Շուշանիկ - Շուշանիկ քրիստոնեայ է
եւ քրիստոնեայ կը մեռնի:

Օհան - (Ջոջիկին հետ դուրս ելլելով)
Վա՛խ, աչքերս չտեսնէին սրբափայլերու
քանդումը, ականջներս չլսէին պղծուած
կոյսերու ողբն ու կոծը ...:

Շուշանիկ - (Ծնրադիր Տիրամօր պատ-
կերին առջեւ) Ո՛վ Տիրամայր, օղնէ տա-
ռապած աղախինիդ, ահաւասիկ Յուդան
կը հասնի: Ես չեմ ինզրեր մահէն աղա-
տիլ, այլ անմեղ զաւակներս փրկէ եւ
դարձուր ամուսինս իր չար ճամբայէն:

Բ. Մանկլաւիկ - (Ներս մտնելով) Մեր
արեգնափայլ իշխանն արդէն զգեալ հա-
սած է:

Ա. Մանկլաւիկ - Հրամայեց որ Տիկինը
պատրաստ ըլլայ զինքն ընդունելու:

Շուշանիկ - Ո՛վ Տէր, անցուր ինծմէ
այս դառն բաժակը:

ՏԵՍԻՆ ԻՆՆԵՐՈՐԴ

Վազգէն եւ Շուշանիկ

Վազգէն - (Հագուած իշխանական պա-
րեգօտ մը, երկար տաքատ մը սրունքնե-
րուն պնդուած. ոտքին երկու գոյնով կօ-
շիկներ. մէկը դեղին, միւսը կարմիր.
վիզէն կախած մանեակ, ականջներուն՝
օղեր, մէջքին՝ գօտի կապած: Բարկա-
ցայտ, լիրք եւ արիւնոտ աչքերով: Ման-
կլաւիկներուն դառնալով) Դո՛ւրս ելէ՛ք:
(Յետոյ Շուշանիկին դարձած) Քանի՞
անգամ քեզի մարդ զրկեցի՞ որ դաս եւ
հնազանդիս իմ կամքիս, եւ դուն յամառ-
օրէն մերժեցիր: Որո՞ւ վրայ յոյս դրեի
եւ, Հայաստանի ջախջախուած բանակնե-
րո՞ւն վրայ, թէ խաչեցեալի մը վրայ:
(Շուշանիկ պատին կոթնած է, վսեմօրէն
կանգնած Վազգէնին դիմաց, ձեռքերն ե-
տեւ պատին դրած) Պատասխան տուր.
որո՞ւն վրայ, որո՞ւն վրայ. ո՞վ է քու
յոյսդ, ո՞վ կրնայ քեզ փրկել իմ ճիւղնե-
րէս. քու հա՞րկը թէ քու Աստուածդ:
Ես ուրացած եմ այդ Աստուածը: Ես փառ-
քը, ոյժը, պատիւը կը պաշտեմ, եւ քեզ
կ'ուզեմ թաղուհի կարգել Հայաստանի եւ
Վրաստանի: Խօսէ՛, խօսէ՛, կ'ընդունի՞ս
այս փառքի նոր կեանքը:

Շուշանիկ - (Չոր) Ո՛չ:

Վազգէն - Ուրեմն, մեռնի՞ր կ'ուզես:

Շուշանիկ - Այո՛, քան Վատօրէն ուրա-
նալ երէկուան պաշտածս:

Վազգէն - Շուշանի՛կ, դուն իմա ես,
ինչ որ ուզեմ՝ կրնամ ընել: Քեզ կրնամ
հիմա խեղդել, ջախջախել եւ այսպէս
(բռնելով կը նետէ Շուշանիկը բազմոցին
վրայ) ապտոտ լաթի պէս նետել դուրս:

Վաչէ - (Վազգէնով ներս կը մտնէ) Մա-
մա՛, աղուոր թիթեռնիկ մը բռնեցի:

Վազգէն (կրակ կտրած) Ո՞վ բերաւ այժ
տղան հոս. ո՞վ անաստեց հրամաննե-
րուն:

Վաչէ - (Հօրը ոտքերուն պլլուելով)
Հայրի՛կ, հայրի՛կ:

Վազգէն - (Տղան անդին հրելով) Ես քու
հայրիկդ պիտի ըլլամ երբ ամենազօր ա-
րեգակին նուիրուիս:

Վաչէ - (Հալով) Մամա՛, ես այս հայ-
րիկը չեմ ուզեր, ուրիշ մը բեր:

Վազգէն - Հա՛, հա՛, հա՛, ուրեմն ու-
րի՞շ մէկը... անմեղ բերանը խոստովա-
նեցաւ:

Շուշանիկ - Սուտ է, զրպարտութիւն է:
Վազգէն - Ձեմ ուզեր տարակուսել,
դուն միշտ պարկեշտ եղած ես: Բայց իմ
կամքս պէտք է կատարուի:

Շուշանիկ - (Ոտքի ելլելով, Վազգէնի
դէմ կանգնած) Դո՛ւն, դո՛ւն Վազգէն,
դուն ես անհաւատարիմ ամուսինը. դուն
Պարսկաստանէն կին մը բերած ես. զա-
ւակներուդ նախատինք մը, ընտանիքիդ
ամօթ մը:

Վազգէն - Կի՛ն. ի՞նչ է կինը. հաճոյքի
դորձիք. ինձ համար արժէք չունի: Ար-
քայից արքան փափաքիս չափ ուզեց նը-
ւերել, բայց ես զեղեցկապոյնն ընտրեցի,
հլու, հնազանդ, քան թէ զոռոյ Մամիկո-
նեան մը: Բայց Գուգարքը պէտք է դիտ-
նայ՝ թէ Վազգէնին բռնեցըլ ամէնուն
վրայ է, եւ ամէնէն առաջ՝ իր կնոջը վը-
րայ: Քեզի համար երկու ճամբայ կայ.
կամ երջանիկ թաղուհի՛ կամ մահ:

Շուշանիկ - Ես մահուան ոտքերը կը
համբուրեմ:

Վազգէն - Իմ հաճոյքս պիտի ըլլայ նախ
քեզ սրբազան կրակէն անցընել եւ ապա
հօղիդ դժոխք նետել: (Պղնձին վրայ
գարնելով եւ դէպի դուրս) Բերէ՛ք սրբա-
զան կրակը, ո՞վ ճամբարտութեան քրմու-
հինք:

Շուշանիկ - Բե՛ր կրակդ, մանչուկիս
կ'ըսեմ որ վրան թքնէ եւ մարէ:

Վազգէն - Իմ բարութիւնս քեզի քա-
ջութիւն տուաւ: (Դարձեալ դէպի դուրս
եւ ջղայնօրէն պղնձը հարուածելով) Բե-
րէ՛ք սրբազան հուրը, խուսկն եւ զմուռս
բերէ՛ք՝ որ այս կինն իմանայ թէ ո՞վ է
զօրաւոր աստուած, իր խաչեցեալը՝ թէ
արեգակը:

Շուշանիկ - Եթէ՛ դիս կրակներուն մէջն
ալ նետես, իմ հոգիս սպիտակ աղաւնիի
պէս երկինք պիտի բարձրանայ. իսկ քու
թաղդ, փառասիրութիւնդ, պիտե՞ս ուր
պիտի վերջանան... Ափ մը հոգ. ես, կա-

ւէ արձան մը, բաւական է շանթ մը՝ քեզ
փշուր փշուր ընելու. այն ատեն ո՞ւր է
Վազգէնը. բայց ո՞վ կը հարցնէ թէ հօլն
ո՞ւր կը տանի աշնան տերեւը:

ՏԵՍԻՆ ՏԱՄԵՐՈՐԴ

Երկու քրմուհիներ եւ վերինները

Վազգէն - (Երկու քրմուհիներ, հագ-
ուած երկար սպիտակ պարեգօտներ, մէջ-
քերին կապոյտ գօտի, կը բերեն սրբա-
զան կրակը եւ գայն կը դնեն սեղանի մը
վրայ, խուսկ կը լեցնեն եւ քովը կանգ
կ'առնեն) Եկէ՛ք, սրբութեան պաշտօնեա-
ներ, բերէ՛ք ճամբարտութեան աստուածը:

Ա. Քրմուհի - Ո՞վ սրբազան հուր, որ
կը մաքրադործես հօղիները եւ կեանք
կու տաս բոլոր աշխարհի:

Բ. Քրմուհի - Դու ճամբարտութեան ճա-
ռագայթ, լոյս եւ ցնծութիւն աշխարհի:

Վազգէն - (Խոնարհելով) Ամէն. դար-
ձո՛ւր մոլորութենէ՛ այս դիւահար կինը:
Ա. Քրմուհի - Բա՛ց իր աչքերը՝ որ լոյ-
սը տեսնեն:

Բ. Քրմուհի - Թէ՛ միայն ես ճամբարտու-
թիւն եւ կեանք:

Վաչէ - (Մօտենալով կրակին հետ խա-
ղալու) Մամա՛, այս կրակին վրայ չաղա-
նա՞կ պիտի խորովենք:

Շուշանիկ - (Տղուն քեռէն ետ քաշելով)
Մի՛ մօտենար. աստանայի լեզուն է:

Վազգէն - (Յափշտակելով տղան) Մա-
նաւանդ թէ նախ այս անմեղ զաւակը
պէտք է զոհել: (Վաչէն կրակին վրայ կը
բռնէ. Վաչէ կը պռոնայ եւ ոտքերը քափ
կու տայ) Ընդունէ՛, ով մեծդ Որմիկդ, իմ
արիւնիս այս երախայրիքը:

Շուշանիկ - (Տղան յափշտակելով) Ո՛չ,
ո՛չ. խելադար աստանայ, ո՛չ, Վաչէն իմա
է. մկրտուած քրիստոնեայ է, եւ ոչ ոք
կրնայ զայն Աստուծմէ յափշտակել:

Վազգէն - (Վաչէն տանելով քեմին ան-
կիւնը) Պողոտան դահապետ, առ այս լա-
կոտը եւ տար Ուփրեթի բերդը, բանտէ՛
միւսներուն քով:

Վաչէ - (Բեմէն դուրս կը լսուի տղուն

լացր) Մամա՛, մամա՛, չեմ ուզեր հոն երթալ. մամա՛, աղաւթ զիս. չեմ ուզեր այս հայրիկը...

Շուշանիկ - Դուռն հայր չե՛ս, անգութ զազան ես: (Ուժեղ) Զաւակներս տուր. Վազգէն, զաւակներս քեզմէ կ'ուզեմ:

Վազգէն - Զաւակներդ պիտի ունենաս՝ եթէ ինձի հնազանդիս: Եկուր, անհաւատ աղջիկ, խոնկը պատրաստ է, դո՛ւն՝ որ քաղցր բուրումին մէջ դառնացած հողիդ վերածնի: (Շուշանիկ բռնի ինկած բազմոցին վրայ՝ պատախտան չի տար) Եկուր, խոնարհեցուր հարստ զուլայ երկնային կրակին առջեւ. ասկէ վերջ ասիկա քու տէրդ, քու փառքդ է:

Շուշանիկ - Դիւային կրակ զժոխքին մէջ այրելու համար քու եւ քու թաղաւորիդ հողին:

Ա. Քրմուհի - Հայհոյեց:

Բ. Քրմուհի - Մահապարտ է:

Ա. Քրմուհի - Ես կը սոսկամ, Որմիկդ վրէժ պիտի առնէ:

Վազգէն - Ես պիտի ըլլամ աստուածներուն վրէժխնդիր:

Շուշանիկ - (Հեգնական ծիծաղով) Իսկապէս ծիծաղելի էք. եթէ այնքան կը վախճաք կրակէն՝ վրան դոյլ մը ջուր նետեցէք, կը մարի, կ'ոչնչանայ:

Բ. Քրմուհի - Ո՛վ իշխան, եթէ արքայից արքան լսէ...

Ա. Քրմուհի - Եթէ զենպետն հոս ըլլար...

Բ. Քրմուհի - Եթէ Որմիկդ երկինքէն իմանայ...

Շուշանիկ - (Հանդարտ հեգնութեամբ) Մի՛ վախճաք, խեղճ ստրուկներ, Որմիկդ խուլ է: Ազրայէլ զեւն է:

Վազգէն - (Կատաղի) Ո՛վ զժոխքի բոլոր հողիներ, շատ եղաւ, շատ եղաւ: (Խոյանալով Շուշանիկին վրայ՝ գայն բռնի կը քաշէ կրակին առջեւ) Ծուռ գիր այս սրբազան կրակին առջեւ, եթէ ոչ՝ ոսկորներդ կը ջախջախեմ, մաղերդ աղեղի լար կ'ընեմ, զեղեցիկ աչքերդ կը փորեմ եւ կուրծքէս կը կախեմ. ե՛ս եմ քու տէրդ, քու աստուածդ. հասկցա՞ր: (Դառն ծիծաղով պատէն կախուած պատկերին կը

նայի) Հա՛, հա՛, հա՛, հիմա հասկցայ. քու յոյսդ այս պատէն կախուած կնոջ պատկերին վրայ գրեք ես: (Պատէն վաղկը քաշէ Տիրամօր պատկերն ու գայն այրելով, անոյշ ու հեգնական) Տե՛ս, Շուշանիկս... Ի՞նչպէս ծուռ կը դառնայ:

Շուշանիկ - Սրբապիղծ ձեռքեր:

Վազգէն - Հիմա ի՞նչ մնաց: Աստուածդ խաչին վրայ մեռած. աստուածուհիդ ծուռին հետ ցնդած: Քեզի ի՞նչ մնաց. խոնարհեցնել զոռոգ ճակատդ Որմիկդին առջեւ:

Շուշանիկ - Մամիկոնեանի մը ճակատը՝ միայն ճշմարիտ Աստուծոյ առջեւ կը խոնարհի:

Վազգէն - Ուրեմն, իմ եւ քու մէջդ մէկ բան մնաց. Ատելութիւնը: Դուռն կ'ուզես կործանել Վազգէնին փառքը, անոր զըլխէն խել ոսկեղէն թաղը: Դուռն զիս կ'ատես, կ'ատես քու զաւակներդ, ամբողջ Գուգարքը կ'ատես, չես խորհիր մեր երջանկութիւնը, այլ նազովբեցի մը կը պաշտես: Բայց Վազգէնին բռնեցքը պողպատ է, կամքն՝ անդառնալի: (Բռնելով Շուշանիկը, գայն պատին կեցնելով. կը սեղմէ կոկորդը) Քեզ կը խեղդեմ կատուի նման, թող մայրդ ցաւէն զերեզման իջնէ, հայրդ զողայ իմ ոյժէս:

Շուշանիկ - (Նուաղկոտ) Ա՛հ... մայրի՛կ... մայրի՛կ...:

Ա. Քրմուհի - (Վազգէնին փղնձեղէն բռնելով) Տէր իմ, հանդարտէ՛, վրան սրբազան մօխի կը ցանկնք եւ թերեւս Հարաման զեւն ելլէ իր մէջէն:

Վազգէն - (Ետ քաշուելով) Յանկէ՛ք, մօխի ցանկէք, կրակ ցանկէք՝ որ սեւ հողին մըրկի:

Բ. Քրմուհի - (Շուշանիկ գետին ինկած է, երեսը յատակին կողմնակի, անգոյ վիճակի մէջ: Քրմուհին քիչ մը մօխի ցանկելով) Ելի՛ր, Հարաման զեւ, ելի՛ր այս հողիէն դուրս:

Վազգէն - Ո՛չ չեմ ուզեր հոս աստիկեցնել զինքը. լաւ է որ զնգաններու խորք փախ եւ լսէ Վազգէնին փառքը: Կեցցէ՛ իմ նոր Շահինա թաղուհիս (Դուրս կ'ելլէ):

Ա. Քրմուհի - Վերջապէս. սոսկում եկաւ վրաս:

Բ. Քրմուհի - Մարդախոշոջ զազան մ'է:

Ա. Քրմուհի - Խելաղար մը:

Բ. Քրմուհի - Անխելո՞ւ զայլ մը:

Ա. Քրմուհի - Արքայից արքան պէտք է զիտնա՛յ թէ որու հետ բարեկամ է:

Բ. Քրմուհի - Սիրտս կտոր կտոր եղաւ այս խեղճ կնոջ համար. եթէ ոյժ ունենայի՛ կը աստիկեցնէի այդ հրէջը:

Ա. Քրմուհի - Աչքերը կը փորէի:

Բ. Քրմուհի - Այս կինը՝ բարեկամ, եղբայր, պաշտպան չունի՞:

Ա. Քրմուհի - Նոյն բանը չէ՞ մեր երկրին մէջ. Յաղկերտի աչքերէն ամբողջ Պարսկաստան կը զողայ:

Բ. Քրմուհի - Եւ մենք ալ զերիններ ենք այդ անգութ մարդերուն ձեռքը:

Ա. Քրմուհի - Ամէն օր փայտ դիր, խոնկէ որ այս անկուշտ կրակը չմարի:

Բ. Քրմուհի - Ծուխէն աչքերս կուրցան. անգամ մը զգեստներս բռնեցան, քիչ մը նայ պիտի այրէի:

Ա. Քրմուհի - Եւ մենք ստիպուած ենք կեղծել, պաշտել, ծառայել:

Բ. Քրմուհի - Գիշերը քուն չունինք, ցերեկը հանդիստ չունինք:

Ա. Քրմուհի - (Մօտենալով Շուշանիկին, որ գետին ինկած է անշարժ եւ գրեթէ մարած վիճակի մէջ. գայն կը ցնցէ) Իշխանուհի, ներէ՛ մեզի, մենք ալ ըստրուկներ ենք մեր թաղաւորին ձեռքը: Ա՛հ, եթէ տեսնես ի՞նչ սոսկալի կերպով բանք ունի, Վազգէնը ոչինչ է անոր քով:

ՏԵՍԻԼ ՏԱՍՆԵՐԿՆԵՐՈՐԳ

Երկու մանկալիկներն ու վերինները

Ա. Մանկալիկ - (Բեմ ելլելով, վայրկեան մը լուռ) Վա՛յ, ի՞նչ կը տեսնեմ. Տիկինը մեռած է:

Բ. Մանկալիկ - (Մօտենալով) Իշխանուհի՛, ո՛վ բարի եւ սուրբ իշխանուհի:

Շուշանիկ - (Հազիւ լսելի) Ա՛հ...

Ա. Մանկալիկ - Իշխան Զոջիկ, Սողոմէ, հասէ՛ք, հասէ՛ք, Տիկինը կը մեռնի (դէպի դուրս):

ՏԵՍԻԼ ՏԱՍՆԵՐԿՆԵՐՈՐԳ

Զոջիկ, Սողոմէ եւ վերինները

Զոջիկ - (Բեմ վազելով) Շուշանի՛կ... Շուշանի՛կ (վերցնելով՝ բազմոցին վրայ կը դնէ): Ա՛հ, զազան Վազգէն:

Սողոմէ - Զիւնը զլիսուս, քոս ըլլամ:

Զոջիկ - Սողոմէ՛, վազէ, քիչ մը ջուր բեր: (Սողոմէ ջուրի կը վազէ) Շուշանի՛կ, Շուշանի՛կ (կը ցնցէ գլուխը, կը շոյէ երեսը): Բա՛յ սիրուն աչքերդ:

Սողոմէ - (Զուր բերելով) Երեսիդ վարդի ջուր պէտք էր, չըթներուդ՝ երկնային մանանայ, իմ աղնիւ իշխանուհիս:

Զոջիկ - Աստուած իմ, դուռն հասիր օդն ու թեւս:

Բ. Քրմուհի - Եթէ ես չըլլայի՛ զինքը պիտի խեղդէր:

Զոջիկ - (Քրմուհիներուն) Դուրս տարէք այդ զիւային կրակը:

Ա. Քրմուհի - Ա՛հ, ո՛չ, տէր իմ, Վազգէնին հրամանը պէտք է, մեզ կտոր կտոր կ'ընէ:

Սողոմէ (Շոյելով Շուշանիկին երեսը) Բա՛յ աչքերդ, իմ սիրելի իշխանուհիս:

Շուշանիկ - (Շատ նուաղկոտ) Ա՛հ, դուք ո՞վ էք...:

Զոջիկ - Ես Զոջիկ եմ՝ քու տաղրդ, Սողոմէն է...:

Շուշանիկ - (Զառանցանքով) Վազգէն, չեմ ուրանար... Վազգէն, զաւակներս կ'ուզեմ...:

Սողոմէ - Վա՛յ Զոջիկ, հողը մանէի, չտեսնէի, կը գոռանցէ արդէն: (Դուրսէն հեռաւոր աղմուկ եւ մոնչիւն... երկար եւ ընդհատ ընդհատ):

ՏԵՍԻԼ ՏԱՍՆԵՐԿՆԵՐՈՐԳ

Վազգէն եւ վերինները

Վազգէն - (Բեմին անկիւնէն դէպի դուրս) Հա՛, հա՛, հա՛, (շատ քրքշալի) ուսմիկը ծովացիք է պալատիս չուրջ՝ իր իշխանուհին աղատելու. հա՛, հա՛, հա՛: Ճանաչեալ պէս մէկ ափովս կը ճգնեմ բոլորը: Պահակներ, խտացուցէք պաշտ-

պանութիւնը... (Դառնալով Ջոշիկին, Սողոմէին) Հեռացէ՛ք սակից (կը հրէ քեւերով): Եղիսկոս, քահանայ, Ջոշիկ, հեռացէ՛ք դուք բոլորդ, ինչ որ ալ բլլաք, չէք կրնար այս որսը ձեռքէս խլել: (Յընգելով Շուշանիկը) Է՛յ, վհուկ, պիտի հրահարանդի՞ս թէ ոչ (Շուշանիկ լուռ է):

Ջոշիկ - Գու՞թ ունեցիր տկար արարածի մը, քաշէ ո՞ճարդործ բազումներդ. ան արդէն զրեթէ մեռած է:

Վազգէն - Կրնե՞րը եօթը հոգի ունին, ես մէկիկ մէկիկ պիտի մեռնեմ այդ հոգիները: (Շուշանիկին) Վհուկ, պատասխան տուր, պիտի հրահարանդի՞ս թէ ոչ:

Շուշանիկ - (Շատ նուաղ կոտ) Տէ՛ր Յիսուս, բնորոշ իմ հոգիս:

Ջոշիկ - Ի՞նչ ամօթ, ի՞նչ նախատինք մեր անունին: Վազգէն, հօրդ ոսկորները կը դողան իր զերեզմանին մէջ: Մայրդ քեզ կ'անիծէ. անարժան դուստկ մեծ Աշուշային. վախցիր Աստուծոյ:

Վազգէն - Ջոշիկ, դու լաւ զիտցիր որ ես եմ Գուգարքի բղէժը. արքայից արքային սիրելի փեսան. ձեր կեանքերուն բացարձակ տէրը. եթէ ուզեմ՝ բոլորդ ճնշողութեամբ պէս, սուրիս ծայրը կ'անցրեմ: (Դուրսէն աղմուկն աւելի կը շատնայ) Պոռացէ՛ք, պոռացէ՛ք, ոչխարներ. մէկ զայլ կը բաւէ ձեզ սարսափեցնելու համար: (Դառնալով քրմուհիներուն) Տարէ՛ք այդ սրբազան հօրը եւ զրէք իմ հօրս շինած փառաւոր տաճարին մէջ. ես եւ բոլոր Գուգարքը պիտի դանք պաշտելու: Բայց ո՛չ. կեցէք վայրկեան մը. այս քածին հետ պէտք է նսեւ իր բոլոր յիշատակները մեռնին: (Սեղանին վրայէն յափըշտակելով Շուշանիկի փոքրիկ աղօթագիրքը) Համբուրէ՛ վերջին անգամ այս կախարդական գիրքը: (Կը դնէ շրթներուն եւ Շուշանիկ տաք համբոյք մը կու տայ) Համբուրէ՛, համբուրէ՛. տես, մէջը խաչեցեալիդ պատկերը կայ. նայինք, քեզի օգնութեան կը հասնի: Այսպիսի համբոյք մ'ինձ երբեք չէիր տուած: Նայէ՛, լաւ նայէ՛ թէ պարսպ բաներն ինչպէս շուտ կ'այրին: (Կ'այրէ գիրքը) Յարգի

շիւղի պէս: Մեծ հօրդ նուէրն էր, այնպէս չէ՞:

Ջոշիկ - (Չեմ քէն յալիշտակել ջանալով) Սրբապիղծ...:

Շուշանիկ - (Նուաղ կոտ) Կրնաս ամէն բան աչքել, բայց ոչ իմ հոգիս:

Վազգէն - Քու սեւ հոգիդ իմ ափերում մէջն է. զայն մոխիր պիտի դարձնեմ ու ցանեմ հօրդ անփառունակ զերեզմանին վրայ: (Դուրսն ուժգին որոտում եւ անձրեւի ձայն):

Ա. Քրմուհի - Տէ՛ր իմ, ահա Որմիդդ կը շրջի երկնքին մէջ, նա սաստիկ բարկացած է. մինչեւ ե՞րբ այս նախատինքները:

Բ. Քրմուհի - Կրնայ մեզ եւ ձեզ շանթահարել:

Շուշանիկ - Ո՞վ թշուառ զերասաններ:

Վազգէն - Տարէ՛ք երկրպագելի կրակը. տարէ՛ք, թող հանդիս հօրս շինած տաճարին մէջ:

Ջոշիկ - Վախցիր ժողովուրդին կատաղութենէն:

Վազգէն - Քեզի պէս ոչխարները կը վախնան, ո՛չ Վազգէն: (Մինչ քրմուհիները կրակը կը վերցնեն, խումկի ծուխը կը բարձրանայ: Վազգէն ջերմեռանդ կը խոնարհի) Խոնարհեցէ՛ք բոլորդ արեգակի զուտորին առջեւ: (Ջոշիկ, Սողոմէ քիչ մը կը խոնարհին. Շուշանիկ արհամարհոտ եւ վսեմ կը կենայ: Վազգէն կը ջանայ բռնի զինքն ալ խոնարհեցնել, բայց Շուշանիկ փարի պէս տեղը կը մնայ) Խոնարհէ՛ դուռն ալ, ճակատդ հոգին քեզ... (Քրմուհիներն երգելով դուրս կ'ելլեն):

Երկնեց երկին եւ երկիր
Եւ ծրնու հուրն ոսկեծիր.
Երկնեց եւ ծով ծիրանի
Ծրնու արփին պատանի...:

Հազար աչքեր նա ունէր,
Հազար ճաճանչ նա ունէր.
Հազար ականջ լըսելու
Պապատանքներ մարդերու:

(Երգն երբայով կը նուաղի)

Շուշանիկ - Ջոշիկ, եւ դո՞ւ... Սողոմէ՛ դո՞ւն ալ...

Ջոշիկ - (Ափերով երեսը գոցած, հեկեկալով դուրս կը փախչի) Վա՛յ ինձ... Վա՛յ ինձ...:

Շուշանիկ - (Նուաղ կոտ) Ի՞նչ սարսափելի է թողնել Արարիչը եւ պաշտել արարածը...:

Սողոմէ - (Չեմ քէն կուրծքը բախելով) Մեղա՛յ, տէ՛ր... մեղա՛յ...:

Վազգէն - Դո՛ւրս ելէ՛ք բոլորդ: (Ոչ ոք կը մնայ, բացի Շուշանիկէն) Իսկ դուռն տակաւին հո՞ս ես՝ լուռ արձանի պէս: Զպաշտեցի՞ր կրակը, մեռի՛ր խաւարին մէջ: (Դէպի դուրս) Պողոտա՛ն դահապետ: (Կը զարնէ պղինձին վրայ) Պողոտա՛ն դահապետ...:

ՏԵՍԻԼ ՏԱՍԵԼՁՈՐՍԵՐՈՐԴ

Պողոտան դահապետ եւ վերինները

Պողոտան - (Բոլորովին կարմիր հագնուած, գլխուն լայն բաբախ մը) Հրամե՛ցէք, Տէ՛ր իմ, պատրաստ եմ:

Վազգէն - (Շուշանիկին քեւէն փաշելով) Շղթայէ՛ այս կինը եւ տար Ուփրեթի զընդանները նետէ. մերկացուր իշխանական հանդերձներէն, թող խորադ հազուր. օրական դաւաթ մը ջուր եւ զարիի նկատման մը. ոչ ոք այցելէ, երբեք լոյս չտես:

նէ. խաւարը սիրեց, թող խաւարին մէջ քարշ տայ իր ողորմելի կեանքը...:

Պողոտան - Բա՛յց... տէ՛ր իմ... Ի՞նչ պէս իշխանուէին շղթայի... ձեռքերս կը դողան...:

Վազգէն - Դու մարդ չես, այլ ձեռքիս մէջ սուր մը... Շղթայէ՛, իմ հրամանս է...: (Ոսկի մը դնելով Պողոտանի ափը) Ա՛ռ, ասիկա քեզի վարձը:

Պողոտան - Երբ ոսկի կայ, աստուած ալ կը շղթայէ: (Քաշելով Շուշանիկի քեւէն՝ դուրս կը տանի):

Վազգէն - (Մինակ բերմին վրայ) Ես եմ այս աշխարհին թաղաւորը եւ աստուածը: Վա՛յ անոր՝ որ կամքիս դէմ կը կենայ: (Բռունցքն երկինք բարձրացուցած) Ո՛չ Քրիստոս, ոչ բոլոր քրիստոնեաները կրնան իմ թագս խլել: (Կը դառնայ դէպի պատը՝ ուր կախուած էր Տիրամօր պատկերը: Հոն Տիրամայրը՝ այրած պատկերին կերպարանով լուսաւոր եւ փայլող կ'երեւայ) Ո՞վ, ո՞վ կախեց պատէն դարձեալ այս պատկերը: Ես այրեցի... ես կրակին տուի... տեսէ՛ք, ի՞նչպէս կը նայի... Կախարդութիւն... կախարդութիւն... (Խոյս կու տայ բեմէն):

Վարագոյրը կ'իջնէ

(Շարունակելի)

Հ. ՎԱՀԱՆ ՅԱՎԱՆՆԵՍԵԱՆ